

Սահման

Արցախի ռազմական գերատեսչության ղեկավար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանը վստահեցրել է, որ բանակն ի վիճակի է համարժեք պատասխանելու հակառակորդի սադրանքներին ու պատրաստ իրավիճակից ելնելով ձեռնարկելու նաև հարձակողական գործողություններ: Այս մասին նա ասել է հուլիսի 12-ին Արցախ այցելած ԶԳ ԱԺ մի խումբ պատգամավորների հետ հանդիպման ժամանակ:



N 27 (675) 14-20.07 2017



911 Արևմտյան թերթ



ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԻ ՄԻՆԻՍՏԵՐՍՏՎՈ ՍԵՐՎԻՍԻ ՍԻՏՈՒԱԿՑԻՆԱԿՆԵՐԻ ՄԻՆԻՍՏԵՐՍՏՎՈ ՍԵՐՎԻՍԻ

Այլընտրանք ԼԱՐՍԻՆ

Պրահայում կայացել է Մոսկվայի և Թբիլիսիի բանակցային հերթական հանդիպումը: Ըստ «Կոմերսանտի» կողմերը պայմանավորվել են գործողության մեջ դնել «Առևտրային միջանցքների մասին» 2011-ի երկկողմ պայմանագիրը Արևմտյան և Զվ. Օսիայի տարածքներով: Շվեյցարական SGS ընկերությունն է հսկելու բեռնափոխադրման փաստաթղթավորումը: Սա չափա-

զանց կարևոր է Հայաստանի համար, քանի որ մեր երկիրը Ռուսաստանին կապող միակ ցամաքային ճանապարհն անցնում է տարվա զգալի մասն անանցանելի Վերին Լարսով: Եթե պայմանավորվածությունն անընդունելի է, ապա Հայաստանը կունենա դեպի Ռուսաստան կարճ ու հուսալի ցամաքային և երկու՝ Արևմտյան Պսոու-Վեյսլայա անցակետով և Զվ. Օսի-

այի Ռոքիի թունելով ճանապարհներ: Հայաստանը կունենա շատ ավելի հուսալի և էժան առևտրային միջանցքներ, ինչը մեծապես կնպաստի մեր տնտեսության զարգացմանը: Բացի դրանից, կողմերին թույլ է տրվելու շրջանցել մաքսային ձևակերպման նույն հարցը: Այս համաձայնության իրագործման դեպքում կբացվի նաև արհագրական երկաթուղին: ■



Լուսանկարը Համլետ Պետրոսյանի

Կենսատարածք ԿՐԱԿՎԱԾ ԱՆՏԱՌԸ

Ամառվա տապը մեծացրել է բուսածածկ և անտառածածկ տարածքներում հրդեհների առաջացման և տարածման վտանգը: Այս օրերին անտառային հրդեհները ոտքի են հանել աշխարհի հազարավոր հրշեջ-փրկարարների: Կալիֆոռնիայում շոգ ու չոր եղանակը դժվարացնում է հրդեհաշիջումը: Ուժեղ քամիները թռիչքային հրդեհներ են առաջացրել 17 դժվարանատելի անտառավայրերում: Տիեզերքից ստացված լուսանկարներում տպավորություն է, թե այրվում է ամբողջ նահանգը: Տարածվել է 3,5 հազար մարդ: Նահանգի հյուսիսում Սիերա Նևադա լեռան ստորոտին գտնվող Սակրամենտո քաղաքից 100 կմ հեռավորության վրա գտնվող բնակավայրերում կրակից փրկվածների թիվը հասնում է 4 հազարի, և 7,5 հազար մարդ պատրաստվում են հեռանալ իրենց տներից: Հրդեհի դեմ պայքարում կարծես հրշեջներն անգոր են: Չեն բացառում, որ, եթե առաջիկա օրերին չհաջողեն կասեցնել կրակի տարածումը, կարող են պահանջվել բնա-

կիչների նոր տարիանումներ: Տարերային հրդեհներ են նաև Մերձբայկալում: 28 հրդեհի օջախ է գրանցվել երկրամասի ամենադժվարանատելի լեռնամասերում: Թե ԱՄՆ-ում և թե Ռուսաստանում հրդեհների դեմ պայքարում են հրդեհաշիջման բոլոր ժամանակակից միջոցներով՝ ավիացիայով, արհեստական անձրևներով: Իսկ այն անտառաշրջաններում, որտեղ հրդեհը սպառնացող վտանգ չէ, զուր ծախսերից խուսափելու համար դադարեցրել են հրդեհաշիջումը՝ թողնելով ինքնամարմնա:

Մեզ մոտ անտառային տարածքները փոքր են: Հրդեհի դեպքում էլ չիջումը մեծամասամբ իրականացվում են առանց ջրի, մարդկային ուժով ու չարչարանքով: Անտառային վերջին հրդեհները գրանցվել են նախորդ տարի՝ Մեդրու «Արևիք» ազգային պարկում և Խոսրովի արգելոցում: ՄԱԿ-ի տվյալներով՝ անտառային հրդեհների պատճառը մարդն է: Ոչնչանում է անտառը, ոչնչանում է նաև կենդանական աշխարհը,

բաղաբացիների սեփականությունը: Ներմուծվում է նույնիսկ արտադրական անտառ հասկացությունը: Թե ինչ փոփոխությունների կենթարկվի այս նախագիծը, ցույց կտա ժամանակը: Շշմարտությունն այն է, որ 1993-ին անտառային կանաչ ծածկույթը կազմել է մեր երկրի տարածքի 11,2 տոկոսը: Ու թեև պետական վիճակագրությունը շարունակում է ներկայացնել նույն թիվը, բայց ՄԱԿ-ի փորձագետներն այդ ցուցանիշի ուղիղ կեսն են նշում: Հիշեցում. անտառածածկ Լորվեգիայում անտառահատումներն արգելված են, Գերմանիայում ծառահատողին հոգեբուժարան են տանում: 14-րդ դարում իտալական օրենքներով Ալպերում ծառահատումները քրեորեն պատժելի էին: Այդ օրենքը գործում է միջև օրս: Նկարում Վաճառի Սբ Ստեփանոս եկեղեցու (13-րդ դար) ավերակներն են, որ քանի՜ տարի, Գրիգոր Արծրունու «Մշակ» թերթի խոսքով, բռնված էին «թրթուրով, մորեխով, քրդերով»: Անտառն էլ բռնված է գոյությանը սպառնացող վտանգներով... ■

Գագիկ ԵՂՅԱՆ


Կարևոր

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԿԱԴԵՐ



Էջ 2

ԱԻՆ-Ի «ԱՅՅԵԶԱՐՏԸ»




Էջ 3

ԾՐԿԱՐԱՐԻ ՀԱՅԱՅՔՈՎ՝ ԱՇԽԱՐՀԻՆ



Էջ 4

ՄԵԿԸ ԵՎ ՆՈՒՅՆԸ



Էջ 6













